ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անդրկովկասի ու Հայաստանի արհեստների և արհեստավորական միությունների՝ համքարությունների պատմության ուսումնասիրության շնորհիվ բացահայտվել են համքարությունների՝ որպես արտադրական-հասարակական կազմակերպությունների կառուցվածքը, նրանց տնտեսական, կրոնա-բարոյական, վարչա-դատական և հասարակական ներքին ու արտաքին բովանդակ ֆունկցիաները։

Արդեն ընդունված ճշմարտություն կարելի է համարել այն, որ Հայաստանում համքարությունները առաջացել են դեռևս IX—X դդ.։ Հետագայում արհեստների զարգացման ու մասնագիտացման հետ համապատասխան փոփոխություն են կրել նաև համքարությունները, իրենց գոյությունը պահպանելով ընդհուպ մինչև XX դարը։

XVIII դարի վերջին բառորդում Դոն գետի ափին հիմնված Նոր Նախիջևանի հայկական գաղութում բավական լայն տարածում գտած արհեստներին ու արհեստավորական կազմակերպություններին վերաբերող ընթերցողի ուշադրությանը ներկայացվող վավերագրերը հնարավորություն են ընձեռում հանգելու որոշ հետևությունների։

Նախ, մեզ հասած համքարային կանոնները վերաբերում են գերազանցապես XIX դարի կեսերին։ Եվ դա պատահական չէ։ Անցյալ դարի կեսերին Հարավային Ռուսաստանում, այդ թվում նաև Դոնի ավազանում, ապրանքա-դրամական հարաբերություններն ու կապիտալիստական արտադրության ձևավորումն արդեն այն աստիճան առաջ էին գնացել և այնքան որոշակի էին դրսևորում իրենց, որ տնտեսական մրցակցության ասպարեզում քայքայման էին հասցնում մանր արտադրողներին։ Վերջիններս զարգացող կապիտալիստական հարաբերությունների ճնշմանը չանում էին ընդդիմանալ՝ համախմբվելով արհեստավորների իրավունքներն ու նրանց համապարփակ գոյավիճակը պահպանող իրենց վաղեմի կազմակերպությունների՝ համքարությունների մեջ։ Այլ խոսքով, համքարական կազմակերպությունները արհեստավորության ձևերին հիմնական այն լծակներն էին, որով նրանք փորձում էին արգելակել, կամ գոնե մեղմել արհեստավորության շերտավորման ու քայքայման պրոցեսը։

Ստորև բերվող կանոններից այնուհետև երևում է, որ Նախիջևանի հայ համքարությունները կրել են ռուսական միջավայրի և նոր պայմանների ազդեցությունը։ Ի տարբերություն Անդրկովկասի հայ համքարությունների, նրանք անմիջականորեն ենթարկվել են քաղաքային մագիստրատին։ Արհեստավորների ընդհանուր ժողովում ընտրված վարպետգլուխը («ռուստարաշին») չէր կարող իր պարտականությունների կատարմանն անցնել, մինչև որ քաղաքագլուխը նրա ընտրությունը հաստատող հատուկ հրամանագիր չտար։ Այլ խոսքով, Ռուսաստանում հայկական համքարությունների իրավունքները սահմանափակվել են տեղական վարչական մարմինների կողմից, նրանք առավել չափով ենթակա են եղել քաղաքային վարչություններին։

Նշված ազդեցությունը կրելով հանդերձ, Նոր Նախիջևանի համքարություններն իրենց կառուցվածքով, ներքին ու արտաքին բովանդակ կյանքով առավելապես նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին։ Կարելի է ասել, որ համքարությունների կյանքում արմատացած, մնայուն շատ սովորույթներ հայ արհեստավորական շրջաններում պահպանվել և սերնդե-սերունդ փոխանցվելով Նոր Նախիջևան են հասել մայր հայրենիքից։ Այս ենթադրությունը առավել հավաստի է դառնում մանավանդ, երբ նկատի ենք առնում համքարությունների խիստ պահպանողական բնույթը, արհեստավորական միջավայրում ընդունված և ավան-

---

1 Դոնի հայկական գաղութի արհեստների ու համքարությունների մասին ավելի հանգամանորեն տե՛ս Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, էջ 195—224։ Նույնի՝ Նոր Նախիջևանի համքարությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1։

դական ուժ ձեռք բերած նորմերն ու սովորությունները կրեին անփոփոխ պահպանվել են դարեր շարունակ։ Հատկանշական է, որ Նախիջևանի համքարությունների կանոններում ամենուրեք շեշտվում են իրենց սովորությունների ավանդական բնույթը, այն վաղ անցյալից ժառանգած լինելու հանգամանքը։

Վերջապես, համքարությունները իրենց տնտեսական-արտադրական հիմնական նշանակությունից զատ, Նոր Նախիջևանում, ինչպես նաև զարգացած արհեստագործություն ունեցող մյուս գաղթօջախներում կատարում էին մայր երկրից ժառանգած ազգային սովորություններն ու ավանդույթները պահպանողի դեր։ Անտարակույս, համքարությունները բնակչության ազգագրական դիմապատկերն ու ինքնատիպությունը պահպանող էական լծակներից մեկն են եղել, մի հանգամանք, որը մինչև այժմ բավարար ուշադրության չի արժանացել։

Ընթերցողին լրիվ ու համակողմանի պատկերացում տալու նպատակով ներկայացնում ենք ոչ թե մեկ արհեստի, այլ արհեստագործության տարբեր ճյուղերին վերաբերող մի շարք համքարությունների կանոններ։

Վավերագրերը կազմվել են ոչ լրիվ գրագետ անձնավորությունների կողմից։ Հայերենի և, բնականաբար, ռուսերենի հետ նրանցում օգտագործել են նաև բազմաթիվ թուրք-թաթարական բառեր ու արտահայտություններ, որոնք գալիս են Կոստանդնուպոլսի համքարությունների և Ղրիմի թաթարական միջավայրի խոսակցական լեզվի ազդեցությունից։

Փաստաթղթերի վավերականությունն ու ժամանակի ոգին հարազատորեն պահպանելու միտումով մենք ներկայացնում ենք դրանք անփոփոխ։

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Բ. ԲԱԲԽՈՒԴԱՐՅԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1.

Առ Նախիջևանու քաղաքական[2] դումն և ի նմա գերհարգմամբ
յատկացեալ քաղաքական գլուխ Աղա Գեորգ Մարգարովի
Ի քաղաքես եղեալ խաֆաֆաց և տիբիճի[3] արհեստավորաց

ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ԽՆԴԻՐՔ

Որպես հայտնի է գերապատուելուդ, որ ամենայն էսնաֆք վասն յուրեանց ունեն վարպետաց գլուխս, նույնպես և մեք իսկ ունեաք նախնի գլուվայուք հաստատեցեալ վասն մեր էսնաֆին զՊապի Խարաղլան Գրիգորովն որ զկնի բազմամեայ աշխատանացն, և մանավանդ ի ծերութեան ժամանեալ զոլ պատճառելով հայտնեց մեզ թե այլևս ոչ կարե այսմ պաշտոնիս ծառայել։ Միանգամայն խնդրեաց արձակել զինքն ինույն պաշտոնե, որ և մեք համայնքս զիջեալ ի խնդիր նորին և գոհանալով դնմանէ արձակեցաք։ Եվ ի տեղի նորա ըստ խորհրդո միաբան ամենիցս ընտրելով հատկացուցաք վասն մեր զեղիա Դաբրիելյանն ի վարպետգլխություն, զի սա ևս ըստ նախնեացն մերոց կարգավորեցեալ սովորութեանց կառավարեսցե։ Նույնպես վասն սորա օժանդակ և խորհրդակիցս ևս ընտրեցաք զչորեսին անձինս, զերկոսինն ի խաֆաֆայ և զերկոսն ի տիբիճի վարպետացն։ Այսինքն առաջնումն զՊապի Գրիգորովն, երկրորդումն զԱբրահամ Լուսեզենովն, երրորդումն մահտեսի Սարգիս Հարությունովն և չորրորդն զԽաչատուր Մարտիրոսովն։ Ըստ այնու կարգավորեցմամբ զի սոքա պարտին ի պատահելն ի մեջ էսնաֆի մերում գործո ի մեք լինիցին ընդ վարպետ գլխոցն խորհրդակիցք։ Վճռելիսն վճռեացեն և ըստ կարգի նախնեացն մերոց դատեսցեն և զանկարելիսն կամ անհնազանդս յուրեանց առաքեսցեն ի քաղաքական մագիստրաթն մեր վասն վերադատողութեան և այլն։ Քանզի մեք համայնքս միաձուն և միախորհուրդ գոլով ընտրեալ և ընդունեցմամբ հատկացուցեալեմք զսոսա, վասն որոյ եվ ընտրողության բոտբիսկայն[4] որպես հինն, որի 1819 թվոջ հաստատեցեալ կարգավորությունն, նույնպես ի նորոց ընդ այսմ խնդրոցս մերոյ մատուցեալ նորոդ կարգավորությունս տամք ի ձեռն վարպետգլխույն մերում վասն ունելոյ նմա լիովի իշխանություն, որոյ և մեք պարտիմք հնազանդել։ Որոյ վասն ամենախոնարհաբար խնդրեմք, զի ընդ սոյն խնդրոյս մերում մատուցեալ կարգավորական կապակցություն, որ է ինն հատվածովք և անձամբ ստորագրութեամբ սահմանեցեալ։ Զի գիր հարգութեանդ ևս բարեհաճեալ հրամայեսցես ում հարկն իցե բառառբաւ ի ժուռնալ արձանացուցեալ և ստորագրութեամբ

---

2 Քաղաքական—ամենուրեք օգտագործվել է քաղաքային իմաստով։
3 Խաֆաֆ, տիբիճի—մաշիկ և կաշվե ա։ բրդյա կոպիտ իրեր կարող։
4 Բոտբիսկա—ստորագրություն։

անդամոց նաև արքունական կնքով հաստատելն ի ապահովություն ամենիս։ Որոց և ողորմածաբար բարեհաճութեան ձերում սպասեալ մնամք.

Ի երեսաց բոլոր խաֆաֆաց և տիքիճի վարպետաց

ի 4 օգոստոսի
Ի 1824 թիվ

(Ստորագրություններ)

(Հայկական ՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 139, գործ 15, թղթ. 8)։

2.

Ի 1832 և ամսեանն ապրիլի 27-ին եղև գիրս այս ի Նախիջևան Յաղագս կապակցությամբ միոյ պեսպես օրինակալ.

Մեք ի ներքո ստորագրեալքս Նախիջևանցի կոշկակար արհեստավորքս, հաճելով ըստ հրամանի ուստապաշիյին, յաղագս նորա պեսպես օրինադրութեամբ, պարտեմք առանց պատճառաբերության միրստմիոջե ընդունիլ, զոր ինչ որ իներքոյ ուրույն ուրույն բացահայտվի։

Նախ.— Եթե ի մեր արհեստավորացն կամիցի աշակերտ առնուլ, պարտ է առաջ հայտնել ուստապաշիյին, և ապա բռնել, կամ այն աշակերտին տարիքին կեօրե կարող է վարպետ գլուխն երկու կամ երեք տարիյէն խալֆայ հանելու, և ինչպես որ հին վարպետներուն սովորություններն է։ Կամ խալֆայ ևս բռնելու լինի պարտ է հայտնել վարպետգլուխին և ապա կարողանա նա բռնելու այն խալֆան։

Երկրորդ— Ով որ համարձակվի ինք իր գլխուն վարպետություն անելու չունենա համարձակություն, առանց հայտնելու վարպետություն անելու, մինչև որ երեք կամ չորս վարպետով միասիպ[6] չի տեսնուն, նա կարող չէ վարպետություն անելու կամ տարիքով լինի 24 կամ 25 տարեկան։

Երրորդ— Մեր մեջեն մեկմը չհամարձակի մեկզմեկու քովեն աշակերտ կամ խալֆայ այարտմիշտ[7] անելու և առնելու, ով որ համարձակի առնել պարտ է դատել օրինավոր և շտռաֆ առնել։

Չորրորդ— Եթե մեկ վարպետ մը խազախ[8] խալֆայ ունենանը չհամարձակի այն վարպետն նույն խազախ խալֆային չափի խրկելու, եթե որ խրկե առանց պատճառի կմնա այն վարպետն պակասության մեջն. ոչ է թե միայն խազախ խալֆայն այլ ամենայն խալֆայ չունենա համարձակություն չափ առնելու։

Հինգերորդ— Եթե վարպետաց մեջեն ով որ կեղծավորությամբ վարվի, և եթե նրա կեղծավորությունը վերջապես հայտնվի նա ևս կմնա օրինավոր շտռաֆի մեջ։

---

5 Խալֆա—ենթավարպետ։

6 Միասիպ—հարմար, անհրաժեշտ։

7 Այարտմիշ—սիրաշահել, համոզել։

8 Խազախ—կոզակ։

Վեցերորդ— Մեր վարպետաց մեջեն եթե զաքազնի պան պահող լինի և նորա պանն ֆալշիվի լինի, և գա յավիտսեայ ըլայ տերն, կամ կարն գակվի կամ էօքճեն[9] ծռվի և կամ դանակ բախուցունու, այն վարպետին պանաց պանին ելէօրե խապահակի տակ կեյնի կամ շտռաֆն կառնվի։

Յոթերորդ— Եթե մեկ վարպետ չավուշ խրկի վասն գործի, եթե ընդիմանա, կամ մեկ կեղծավորություն անե չիքայ, այն ժամանակ շտռաֆն կառնվի կամ անպատիվ և կամ յօլսրս[10] կլայ առանց ներելու։

Ութերորդ—Եթե մեր մեջեն ով որ առանց բաշբոռթի խազախ խալֆայ կբռնե, այն ժամ ես պարտ եմ առանց մնալոյ մագիստրատին հայտնելու։

Ոյր վասն վերոյ գրեալ ութն պունկտ բանիս մերով հոժարակամությամբ առ որ ստորագրիմք ի ներքոյ։

(Ստորագրություններ)

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1911, թ. 46)։

3.

ՀԱՄԱՀԱՃ ԿԱՐԳ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

Թիվն հազար ութն հարյուր երեսուն չորս ապրիլի տասնում յավուր, մեք ի ներքոյ ստորագրեալքս, որ եմք քաղաքիս Նախիջևանայ քյուրքճիութեան[11] արուեստագործքս, միաշունչ և միախորհուրդ գոլով, արարաք զայս դաշնագրությունս մեր, վասն էսնաֆի մերում ուղղության և հանգստության, նաև ի օգուտ չքավոր արուեստավրացն մերոց, որոյ վասն և ընտրեցաք ի վարպետացս ի մէջ զՄանուկ Ալլահվերտիովն վարպետ գլխավորության, ընդյորում միավորեալ խորհրդով եդաք զայս կարգավորությունս.

Նախ— Այս վարպետգլուխն մեր պարտի ունիլ ի էսնաֆեն մերոյ վասն յուր զերիս խորհրդակիցս քաջ գիտակս, և զմին հավատարիմ գանձապետ նաև զմին չավուշ, զի ի պատահիլ ի մէջ վարպետացս գործոյ ուրուք, սա վարպետգլուխն ըստ խորհրդվոյ ընտրեցեցոն վարպետաց վճռեսցէ և ավարտեսցէ, բայց եթէ անկարելի և դլխագործ որ պատահիցի յանդիման կացուցանել առ քաղաքն տումն ի վերադատողություն։

Երկրորդ— Ով ոք որ մեծ զավօտ կու բանեցնու, չի համարձակի տուսէն աստի և անտի ժողովելով զմօրթս վասն սէփիյոյ, այլ զայնս արասցէն չքավոր արհեստավորքն մեր, զի նոցանէ յայնմանէ շահելն։

Երրորդ— Ռուստաց ազգէ քուշնարներն, ի մէջ քաղաքիս տուն բռնելով ինքնագլուխ բանելոյ մի համարձակեսցին, այլ եկողքն կամ արդէն իսկ եղեալքն, մեր էսնաֆին քովն մշակութեամբ թող բանին և կամ եթե գան առ մեզ և ի մէջ քիրաիվ տուն կալնուն վասն ինքնագլուխ բանելոյ, չունենամք համարձակություն տալոյ նմայ տուն և կեղծավորեալ մեր անուամբն բանեց։

---

9 Էօքճեն—կրունկը։

10 Յոլսրս—ուղուց շեղվել, արհեստով պարապելուց զրկվել։

11 Քյուրքչի, քուշնար—մուշտակագործ։

նելոյ, քանզի այնպիսի վարպետն տուժելոց է շտրաֆիվ և ապա անպատվութեամբ։

Զորորդ— Ամենայն ոք վարպետքս կամ զավօտչիք, չունիցեմք համարձակութիւն ի միմիանց թէ ռուստ և թէ հայ խալֆայ այարդմիշ անելոյ, այլ կհայոց ազգի խալիֆայն կալեալ ժամուն պարտիմք նախ տանիլ առ վարպետ գլուխն, և նորայ տէֆտէրն դրել տալ զպայմանս և զվարձն և յետ այնորիկ բանեցունելոյ, մինչ ցվերջ ժամադրեալ օրն։ Եվ եթէ ումն խալֆայ կամ մշակ զվարձօղ վարպետն յուր թողլով, գնասցէ առ յայլս ծառայելոյ, այնպիսի պատահմանն, վարպետզլուխն ընդ խորհրդակցօք վերահասութիւնս արասցէն արդար քննօղութեամբ, զի յուրաքանչյուր կողմանս զրկողութիւնս մի լիցի։

Հինգերորդ— Եթե հարկավորեսցի առնել զժողովումն վարպետաց, յայնժամ վարպետ զլուխն առաքեսցէ զչավուշն, և որն պարտի անյապաղ գնալ, և այն հրավիրեցեալ վարպետքն պարտին գալ առանց մնացման ի ժողովն անդ։ Եվ եթէ ոք գլխավոր գործ կամ հիվանդութեան պատճառ չունելով, ոչ գայցէ ի ժողով անդր, յայնժամ այնպիսի ընդդիմացեալ վարպետէն ըստ դատողութեան վարպետաց առնվի շտրաֆն առանց ներողութեանց, զի այլոք վարպետքն ևս խրատեցեալք լինիցին և հնազանդեսցին։

Վեցերորդ— Գանձապետի պաշտոնն ևս հաստատեսցուք, զի սայ առեցեալ շտրաֆավօյ փողերն և կամ ի էսնաֆէ մերոյ ըստ կարողութեան յուրաքանչյուր վասն գանձանակի նուիրեցեալ դրամսն ի տօմարի յուրոյ մի ըստ միոջէ յականէ և անուանէ գրեսցէ և հավատարմութեամբ պահպանեսցէ և գայնս առանց գիտութեան վարպետ գլխոյն, ոչ մէկի մը փող չտայ կամ չի խարճէ, բայց ի հարկավորել նախ յայտնեսցէ վարպետ գլխոյն, և թէ արժան համարեսցի յայն ժամ արասցէ և ուղղութեամբ գրեսցէ ի ելս տօմարի յուրում և հարկ եղեալ ժամուն տացցէ ի հաշիվս ամենայնիվ արդարութեամբ ընդ նմին և գոյացեալ դրամսն ևս ի պատրաստի ունելով ներկայացուցցէ առ հաշուառումն առանց պակասի։

Եօթներորդ.— Այս վերասացեալ կարգադրութեանցն վարպետ գլուխն մեր միշտ պարտի արթնութեամբ վերահասուս և տեսուչս լինելոյ զի մի արատեսցի զպաշտօնն և մի խախտեսցի զայս մեր համահաճ կարգադրությունն։ Եվ մեք իսկ ամենայն ոք վարսրետքս պարտիմք որպէս վարպետ գլխոյն մերոյ նոյնպէս և խորհրդակցացն դատողութեան հնազանդելոյ, վասն այնորիկ և արարեալ եմք զայս կապակցությունս մեր և յաղագս անխախտելի մնալոյն ստորագրեմք։

(Ստորագրություններ)

Համահաճ, կարգ և կապակցութիւնս այս առ քաղաքական տումնս ի քյուրքճի արհեստավորացն յայտնեցավ և տումիս ժուռնալն ի համարն 51-ում բառ առ բառ գրեցավ, որ սոյն էսնաֆքն ընտրեալ են վարպետ գլխութեան զմանուկ Ալլահվերտօվն, ընդ նմայ զերիս խորհրդակիցս. գանձապետ և չավուշ և վասն ընտրութեանցն և կարգավորութեանցն հնազանդելոյն յուրեանց ընդհանուր էսնաֆօք ստորագրեալ են, վասն այնորիկ և քաղաքական տումս

ըստ խնդրոյ սոցին ընկալնու հաճոյս, և տումիս կնքովն ամրացուցանելով հաստատէ ըստորագրութեամբ, ի ապրիլ 13 յավուր, 1834 յամի։—

Քօլլեկյեսքիյ ռեգիստրատոր Պետրոս Բոգոփոփով

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1290, թ. 14—15)։

4.

Նորին գերապատվության Նախիջևանայ քաղաքական գլուխ Աղայ Հայրապետյանի

Տեղվույս մաշկակար արհեստավորաց ի ներքո ստորագրիալ անձանց

Ա Ն Դ Ի Ր

Վարպետ գլուխն մեր տեղվույս բնակիչ Պապուկ Մինասյան Պերպերովն ալկնի քանի տարի կատարելոյ յուր պարտավորությունն, այժմ մենք ի նորոյ ընտրեցինք զնա, ի վերա մեր վարպետ գլուխ, և նրա օգնական և խորհրդակից Ասվատուր Պալիևն, Վարդևան Քացիևն, Գրիգոր Խայիմովն և Սարգիս Պարոնովն և չավուշ։ Ի ետագայս դրեալ պայմանագրության.

1. Վարպետ գլուխն պարտ է պատվիրել և հայեցողություն ունենալ ի վերա վարպետացս որ մեզի հանձնված մուշտարիի կարերն լավ կարենք, որ մեր վրան գանգատավոր մարդ չգտնվի։

2. Ի մենջ վարպետացս մեկ մը չունենա իրավունք ուրիշի խալֆայի մինչի տարին չլրացած այարդմիշ անելով իրեն քովը առնելու։

3. Եթե պատահի որպիսի ևիցէ անկարգություն ի մեջ մեր արհեստավոր վարպետացս յայնժամ վարպետ գլուխն մեր ի միասին ընդ նշանակեալ խորհրդակիցներուն պարտ է դատողություն անել առանց կողմնապաշտության ու անաչառության և տալ պատիժն ըստ սովորության նախնի վարպետ գլուխացն սիրոց։

4. Ով ոք ի մեջն վարպետացս կամ խալֆայ բռնելու ըլա և կամ աշակերտ առնելու ըլա պարտ է հայտնել վարպետ գլխոյն, որ նա անոնց անունն իրեն տեֆտերին մեջ դրե։

5. Եթե մեկ վարպետ մը իրեն խալֆային վրա անգոհունակություն ունենա պարտ է հայտնել վարպետ գլխոյն և նա պետք է վերահասու գործ է՝ եթե վարպետին գանգատը յատուկ խալֆային վրա հաստատվի՝ այնժամ վարպետ գլուխի պարտ է խրատել և հնազանդացնել վարպետին եթե խալֆան չհնազանդվի պարտ է ի բաց հանել էսնաֆեն։ Մեկ վարպետ մը չունենա իրավունք բռնել բանեցնելու, իսկ եթե խալֆան մեղք չունենայնէ վարպետը պարտ է խալֆային տարեկան պատկանեալ հախն հատուցանելու, այնուհետև խալֆան որին մոտը ուզենա նէ կարող է մտնել։

6. Եթե մեկ վարպետմը այս վերոհիշյալ կանոններն չպահպանելով ընդդեմ այսոցիկ կարգադրութեանց բան ինչ անե առաջին անգամին պարտ է ներել, եթե երկրորդ անգամ գործե՝ տացե տուգանս միակ մանեթ սուրբ

Եղիայի գանձանակին։ Իսկ եթե երեքում անգամ պատահի տացն երկու մանեթ մեր արհեստավորաց գանձագին առ ի խրատ լինելոյ այլոց արհեստավորաց։

Վասն այն հայտնելով զայսմանն Գերապատվության ձերում խնդրեմք խոնարհաբար զվերոհիշյալ Պապուկ Մինասյան Պերպերովն հաստատել ի պարտավորության վարպետ գլխոյ և տալ նմա առ այն զհրամանագիր։

Ի 24 մայիսի 1860 ամի

(ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 139. գ. 1638, թ. 28, 31)։

5.

Նախիջևանի քաղաքական գլխոյ նոր ընտրեալ վարպետ գլուխ ի վերա մաշկակար արհեստավորաց Պապուկ Մինասյան Պերպերովիկ

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տեղվույս բնակիչք մաշկակար արհեստավորք թվով հիսունինն ի 24-էն սույն մայիս ամսոյ մատուցեալ խնդրովն յուրյանց հայտնեն թէ վարպետ գլուխն նոցա, որն որ եղեալ էս դու, դկնի քանի տարի կատարելոցդ նույն պարտավորությունն, այժմ նոքա ի նորոյ ընտրեալ են քեզ ի վերա յուրյանց վարպետ գլուխ, և քեզի օգնական և խորհրդակից Ասվատուր Պալիեն, Վարդան Քացիաեն, Գրիգոր Խայիմովն և Սարգիս Պարոնովն և չավուշ, ի յետագայս գրեալ պայմանադրությեան։

1. Վարպետ գլուխն պարտէ պատվիրել և հայեցողություն ունենալ, ի վերա վարպետացն որ նոցա հանձնված մյուշտերիք կարեն լավ կարեն, որ նոցա վրան գանգատավոր մարդ չգտնվի։

2. Ինոցանէ վարպետացն մեկմը չունենա իրավունք ուրիշի խալֆայի մինչի տարին չլրացած այարդմիշ անելով քովեն առնելու.

3. Եթե պատահի որպիսի ևիցէ անկարգություն ի մեջ նոցա արհեստավոր վարպետացն, յայնժամ վարպետ գլուխն նոցա ի միասին ընդ նշանակեալ խորհրդակիցներուն պարտէ դատողություն անել առանց կողմնապաշտության և անաչառության և տալ պատիժն ըստ սովորության նախնի վարպետ գլուխացն յուրյանց։

4. Ով ոք ինոցանէ վարպետացն կամ խալֆա բռնելու ըլա և կամ աշկերտ առնելու ըլայ, պարտէ հայտնվել վարպետ գլուխն, որ նա անոնց անունն յուր տեֆտերին մեջն գրէ։

5. Եթե մեկ վարպետմը իրեն խալֆայի վրա անգոհունակություն ունենա պարտէ հայտնել վարպետ գլխույն և նա պետք է վերահասություն գործէ. Եթե վարպետին գանգատն հատուկ խալֆային վրան հաստատվի այնժամ վարպետ գլուխն պարտէ խրատել և բաց հանել էսնաֆեն։ Մեկ վարպետ չունենա իրավունք բռնել բանեցնելու։ Իսկ եթե խալֆան մեղք չունենա վարպետն պարտէ խալֆային պատկանեալ տարեկան հախն հատուցանելու։ Այնուհետև խալֆան որին մոտը ուզենա կարող է մտնել։

6. Եթե մեկ վարպետմը այս վերոհիշյալ կանոններն չպահպանելով ընդդեմ այս կարգադրութեանց բան ինչ անէնէ առաջին անգամին պարտէ ներել, եթե երկրորդ անգամ գործէ, տացե տուգանս մեկ մանեթ սուրբ Եղիայ գանձանակին։ Իսկ եթե երեքում անդամ պատահի տացե երկու մանեթ ձեր արհեստավորաց գանձանակին առ ի խրատ լինելոյ այլոց արհեստավորաց։ Ուստի խնդրեն հաստատել զքեզ ի պարտավորութեան վարպետ գլխոյ։

Եվ որովհետև հոժարակամութեամբ արարեալ վերոհիշյալ խնդրագործ մաշկակար արհեստավորաց պայմանադրության ոչ պարունակէ ինքեան հակառակ ինչ Հայոց իրավանց և սովորությանց և ճանաչելով զայնպիսի ընտրողություն նոցա համաձայն քաղաքական բարեկարգությանց վասն այս հաստատելով զքեզ վարպետ գլուխ տեղվույս հայ մաշկակար արհեստավորաց կհրամանագրեմ քեզ այսու զի դու ի ստանալ սորին այսուհետև ունիցիս իշխանություն ի վերա նոցա կառավարելով զնոսա սիրով և խաղաղությամբ ունել անդուլ հայեցողության ի վերա անկարգութեանց նոցա և ի մեծամեծ ծանր դիպվածս դառնալ ի մագիստրաթ։ Պատվիրելով քեզ սաստկապես զի դու ի վերա քո եղեալ պարտավորություն ըստ քում մասին կատարեսցես առանց թողության և համաձայն վերոգրյալ կանոնաց, իսկ ինքերհակ պատահմանն վասն թողության քո անկցիս ընդ ծանր պատասխանատվություն։

Մայիսի 26-ին 1860 ամի

Քաղաքական գլուխ Հայրապետով

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 427, թ. 33—34)։

6.

Նորին գերապատվության Նախիջևանայ քաղաքական գլուխ Աղա Հայրապետյանի

տեղիս թերզի[12] արհեստավորաց ի ներքո ստորագրիալ անձանց

Ա Ն Դ Ի Ր

Ըստ հին սովորության մեր Նախիջևան քաղաքի ամենայն արհեստավորք ունեին վարպետ գլուխ որպես և մեր արհեստավորքն ևս ունեցել էինք առաջին ժամանակս, որոնց պարտավորություն է մեր մեջ եղեալ վեճերն ու անկարգությունքն վերահասու եղեալ համաձայն կանոնաց և սովորությանց մերոց վերջացնել սիրով և խաղաղությամբ։ Այդպիսի կանոնք և սովորությունք մեր արհեստին են յետագայքս։

1. Ով որ ի մեր արհեստավորաց կուզե աշակերտ առնել պետք է առաջ հայտնե վարպետ գլուխին, որ նա յուր տեֆտերն գրե և ապա բռնե և այն աշակերտին։ Վարպետ գլուխն կարող է երկու կամ երեք տարին եթե արժանի հանչնայ խալֆա հանել վերին կանոնը վասն աշակերտ առնելու պետք է իմացվի նաև խալֆայ բռնելու համար ալ։

12 Թերզի—դերձակ։

2. Չհամարձակվի մեկմը ինքն իրեն գլուխն վարպետություն անել առանց հայտնելու վարպետ գլուխին, այլ պարտ է առաջ նրան հայտնել և իրեն օգնական խորհրդակիցներով մինասիպ տեսնվի և ապա թե կրնա վարպետություն անել, նույնպես տարիքն ալ պետք է լինի քսանչորս կամ քսանհինգ տարեկան։

3. Մեկ մը չհամարձակի վարպետներեն, մեկ մեկու քովեն խալֆայ կամ ուշակերտ այարտմիշ անել առնել, ընդդեմ պատահմանն կդատվի օրինավոր կերպով և շտրաֆն կուտա։

4. Օտար քաղաքի կամ այլ ազգիք մեր քաղաքին մեջն չուններան իրավունք իրենց գլխուն վարպետություն անելու, եթե չուններան ձեխավի ուրոսվէ[13] վկայական վասն իրենց վարպետության, այլ եթե կուզեն բանելու պարտին խալֆայ մտնել մեր քաղաքի վարպետներուն մոտն։

5. Վարպետ գլուխն կարող է հարկավ գործի համար կամ խորհրդի եթե պատահի ձայն տալ վարպետներուն, չավուշ ալ և վարպետներն պարտ ին իսկույն հայտնվել առանց ընդդիմության։

Ուստի մենք համաձայն մեր հին սովորության վասն բարեկարգելոյ զարհեստն մեր մի քաղաքիս ընտրեցինք այժմ մեր մեջն վարպետ գլուխ զԿարապետ Պապուկյան Զոլոթարեն և նորա օգնական և խորհրդակից զՍիմոն Մամիկոնյանին, զԳրիգոր Խազեղովն, զԳևորգ Նազլխանովն և զՀարություն Խոճեան, իսկ դանձապետ Գևորգ Քոսօղլուն։

Վասն այն հայտնելով զայսմանե գերապատվությամբ Զերում խնդրիմբ խոնարհաբար զվերոհիշյալ Կարապետ Պապուկով հաստատել ի պարտավորություն վարպետ գլխոյ և տալ նմա այո այն զհրամանագիր։

Մայիսի 26-ին 1860 ամի

(ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 139. գ. 1638. բ. 20, 23)։

7.

Նախիջևանու Հայոց քաղաքական գլխոյ տեղվույս բերդի արհեստավորաց նորընտրեալ վարպետ գլուխ Կարապետ Զոլաթարևիդ

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թերդի արհեստավորքն ձեր թուով քսաներեք ի 26-ն մայիսի սույն ամի մատուցեալ խնդրովն յուրեանց հայտնեն թե ըստ հին սովորության մեր Նախիջևան քաղաքի ամենայն արհեստավորք ունեցել են վարպետ գլուխ որպես և ձեր արհեստավորքն ևս ունեցել են առաջին ժամանակս որոց պարտավորությունն է ձեր մեջ եղեալ վեճերն ու անկարգությունքն վերահասու եղեալ

13 1854 թ. Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետի և ներքին գործերի մինիստրության տնտեսական դեպարտամենտի վճռով Նոր Նախիջևանում հիմնվում է արհեստագործական երկու (հայերի և ռուսների) վարչություն։ Հայկական արհեստագործական վարչությունը առաջնորդվում էր ազգային օրենքներով և տնօրինում էր հայ արհեստավորների շահերը, իսկ ռուսականը՝ առաջնորդվում էր ընդհանուր պետական օրենքներով։ Երկու վարչությունն էլ ենթարկվում էին Նոր Նախիջևանի հայկական մագիստրատին։

համաձայն կանոնաց և սովորութեանց ձերոց վերջացնել սիրով և խաղաղութեամբ։ Այդպիսի կանոնք և սովորութիւնք ձեր արհեստին են յետագայքս։

1. Ով որ ի ձեր արհեստավորաց կուզե աշակերտ առնուլ պետք է առաջ հայտնե վարպետ գլուխին, որ նա իր տեֆտարն գրե և ապա բանե։ Եվ այն աշակերտին վարպետ գլուխն կարող է երկու կամ երեք տարին եթե արժանի ճանչնա խալֆայ հանել։ Վերին կանոնը վասն աշակերտ առնելոյ պետք է իմացվի նաև խալֆայ բռնելու համար ալ։

2. Չհամարձակի մեկ մը ինքն իրեն գլուխն վարպետություն անել առանց հայտնելու վարպետ գլուխին, այլ պարտ է առաջ քեզի հայտնվի և քո օգնական խորհրդակիցներովն մինասիպ տեսնվի և ապա թե կարնա վարպետություն անել, նույնպես տարիքն ալ պետք է լինի քսանչորս կամ քսանհինգ տարեկան։

3. Մեկ մը չհամարձակվի վարպետներե մեկզմեկու քովեն խալֆայ կամ աշակերտ այարտմիշ անել առնել, ընդդեմ պատահմանն կդատվի օրինավոր կերպով և շտրաֆ կուտա։

4. Օտար քաղաքի կամ այլ ազգիք մեր քաղաքին մեջն չունենան իրավունք իրենց գլուխն վարպետություն անելու, եթե չունենան ձեխավի ուբռավե վկայական վասն իրենց վարպետությանը, այլ եթե կուզեն բանելու պարտին խալֆայ մտնել մեր քաղաքի վարպետներուն մոտն և կամ վարպետ գլուխն կարող է հարկավոր գործի համար կամ խորհրդի եթե պատահի ձայն տալ վարպետներուն, չաուշալ և վարպետներն պարտին իսկույն հայտնվել առանց ընդդիմության։

Ուստի սրանք համաձայն իրենց հին սովորությանց վասն բարեկարգելոյ զարհեստն իրանց ի քաղաքիս ընտրել են այժմ իրենց մեջեն վարպետ գլուխ զքեզ և քեզի օգնական և խորհրդակից զՍեմեոն Մամիկոնյանին, զԳրիգոր Խազեզովն, զԳեորգ Նազլխանովն, զՀարություն Խաճեանն, իսկ դանձապետ զԳեորգ Քոսօղլուն։ Վասն այն խնդիրն հաստատել զքեզ ի պարտավորություն վարպետ գլխոյ։

Եվ որովհետև ետ վերահասության գործելոց իմ կանոնադրութեանց վերոհիշյալ խնդրագործ թերզի արհեստավորաց երևի հոժարակամությամբ արարեալ պայմանադրություն նոցա, ոչ պարունակե յինքեան հակառակ ինչ հայոց օրինաց և սովորությանց և ճանաչելով զայդպիսի ընտրողություն նոցա համաձայն քաղաքական բարեկարգումից, վասն հաստատելով զքեզ վարպետ գլուխ, որպես տեղվույս հայ նույնպես ևս այլ ազգի թերզի արհեստավորաց հրամանագրեմ քեզ այսու զի տույդ ստանալ նորին այսուհետև ունեցիս իշխողություն ի վերա տեղվույս թերզի արհեստավորաց կառավարելով գնոցա սիրով և խաղաղությամբ։ Ունել անդուլ հայեցողություն ի վերա անկարգութեանց նոցա և ի մեծամեծ ծանր տիպուածս դառնալ ի մաքիստրաթ։ Պարտավորելով քեզ սաստկապես զի դու ի վերայ քո եղեալ պարտավորություն քում մասին կատարեսցես առանց թուլության, և ի հակառակ պատահման անցկցիս ծանր պատասխանատվություն։

Ի 6 հունիսի 1860 ամի

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1638, թ. 21—22)։

8.

Նորին հարգության քաղաքական գլխոյ Նոր Նախիջևանի ժառանգական պատվանուն քաղաքացի աղա Կարապետ Մարգարյան Հայրապետյանց

Նոր Նախիջևանի բոլոր ոսկերչաց էսնաֆի վարպետաց

ԽՈՆԱՐՀԱՐԱՐ ԽՆԴԻՐ

Որպես սովորություն է նախնեաց թե ի մեջ մեր էսնաֆի ըստ վաղեմի սովորության ոսկերչաց, ընտրել զայր ոմն արժանավոր վարպետգլուխ առ ի կառավարել բոլոր ոսկերչաց վերաբերեալ գործս և ունել վերահայեցողություն ի վերա մեր, առ այս պաշտոն անցեալ երեք ամսն, մեք ընտրեալ էաք վարպետգլուխ զարժանավոր Սարգիս Թորոսեան Ոչկերչեանցն և նա կատարեաց զայս պաշտոն լավապես երեք ամ։

Վասն որոյ մեք միաբան խորհրդակցությամբ մերով ընտրեցաք դարձեալ զնոյն անձն վարպետգլուխ արժանավոր Սարգիս Թորոսեան Ոսկերչեանն, ևս և երկու արժանավորս օգնական և խորհրդակից վարպետգլխոյն։ Յամենայն բանս և ի գործ ներկայ դտանիցին այս երկու անձինքն առաջինն պ. Յակոբ Ամիրայովն և երկրորդն պ. Մարտիրոս Պալեանտչիքովն և խնդրեմք ամենախոնարհաբար ի ձերդ հարգության հաստատել զայս մեր ընտրողությունն էսնաֆի։

(Ստորագրություններ)

Ի 8 յունիսի 1860 ամի

Նախիջևան

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1638, թ. 16)։

9.

Ի Նախիջևանայ քաղաքական գլխոյ նոր ընտրեալ վարպետ գլուխ Սարգիս Ոսկերչովիդ

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր ոսկերչագործ անձինքն թվով երեսուն մեկ յ8 էն սոյն հունիս ամսոյ մատուցեալ խնդրովն յուրեանց հայտնեն թե ըստ սովորության նախնեաց յուրաքանչյուր էսնաֆից քաղաքիս սովորություն էր ոսկերչաց ընտրել զայր ոմն արժանավոր վարպետգլուխ առ ի կառավարել բոլոր ոսկերչաց վերաբերեալ գործս և ունել վերահայեցողություն ի վերա յուրեանց։ Առ այդ պաշտոն անցեալ երեք ամս նոքա ընտրեալ են վարպետ գլուխ զքեզ և դու կատարեալ ես զայդ պաշտոն լավապես, վասն որոյ այժմ ևս միաբան խորհրդակցությամբ յուրեանց ընտրեալ են դարձեալ զքեզ վասն յառաջիկա երեք ամոց վարպետգլուխ, և քեզի խորհրդակից զՄարտիրոս Պալեանդչիքովն և զՅակոբ Ամիրաևն։ Եվ որովհետև ձեր վերահասություն գործելոյ իմոյ խնդրոյ

ձեր ոսկերչագործ արհեստավորաց, զի նոքա համաձայն հօժարության յուրեանց ընտրել են զքեզ ի վերա յուրեանց վարպետ գլուխ, վասն այն և ես հաստատելով զքեզ ի նոյն պարտավորությանը և պատվիրեմ զքեզ, զի դու այսուհետև ունիցիս իշխողություն ի վերա տեղվույս ոսկերչագործաց կառավարելով զնա սիրով և խաղաղությամբ, ունել անդուլ հայեցողություն ի վերա անկարգութեանց նոցա։ Եվ ի պատահիլ ի մեջ նոցին որպիսի և իցէ տարաձայնություն ավարտեսցիս զայն համաձայն ձեր էսնաֆի ունեցեալ կանոնագրութեանց և պատվիրելով պատվիրեմ քեզ զի դու ի վերա քո եղեալ պարտավորությունս առաջվումբ կատարեսցես առանց թուլության, և ի հակառակ պատահմանն անկցիս ընդ ծանր պատասխանատվութեան։

Քաղաքական գլուխ

Ի 14 յունիսի 1860 ամի

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1638, թ. 17)։

10.

Նորին գերապատվութեան Նախիջևանայ քաղաքական գլուխ Աղա Հայրապետեանի
Ի ներքոգրեալներս տսակել[14] անձանց

ԽՆԴԻՐ

Որպես սովորություն է հին ժամանակաց հետե, ի մեջ ամենայն արհեստաւորաց, խանութպաններից նույնպես և մեր մեջն կայր այդ սովորությունն՝ ունենալ ի վերա մեր ստառստայ։ Այժմ համաձայն այնպիսվոյ հին սովորութեան ընտրեցինք մենք մեր արտելչիքներուն մեջեն համահոժարությամբ մերով զտեղվույս բնակիչ Պետրոս Պողոսովն, և նրա օգնական և խորհրդակից Գրիգոր Դասպարովն, Յարութիւն Մինասովն, Լուսապարոն Սուքիասովն և Սարգիս Օհանովն, որոց պարտավորությունն է մեր մեջի պատահալ վեճերն ու անկարգությունները համաձայն կանոնաց և սովորութեանց մերոց վերջացունել սիրով և խաղաղությամբ։ Այդպիսի կանոնք և սովորությունքն մեր արհեստին են յետագայումքս։

1. Մեր արտելչիքներն ամենեին չունենան իրավունք մեկզմեկու քետերություն տալու, այսինքն մեկ արտելչիքի զրուցած բանին մեջ դաղտնաբար մտնելով մեկալ առաջվա զրուցողին ոտք զարնելու։

2. Օտար քաղաքացիք կամ այլ ազգից մեր քաղաքի մեջ չունենան ամենեին իրավունք իրենց գլխոն բան զրուցելու և վրաներն բան առնելու բանելու։

3. Մեր արտելչիքներն նույնպես այլ ազգիք և օտար քաղաքացիք մեր արտելներուն մեջն չառնին չբանեցնուն, այլ եթե կուզին նրանց բանեցնելու կարող են օրով բռնել բանեցնելու, իսկ ով որ օրով կբանեցնում ասելով մեր հայերուն հեսապով արտելի մեջ ծածկաբար բանեցունե հախ տանէ այնպիսի արտելչիքէն առաջին անգամին թեպետ կներվի այլ երկրորդում անգամի

---

14 Տսակել—հավանաբար տեսակավորել, առանձնացնել, բաժան-բաժան անել։

շտրաֆն կառնվի, իսկ երրորդում անգամին պետք է մնայ վասն ընդդիմության յուրոյ ի ներքոյ օրինաց դատաստանի առանց ներելոյ։

Վասն որոյ յայտնելով զայսմանէ գերապատվութեանն Ձերում խնդրեմք խոնարհաբար, զվերոյիշեալ Պետրոս Պողոսովն հաստատել ի պարտավորութեան ստառստայի և տալ նման առ այն զհրամանագրություն։

(Ստորագրություններ)

Յունիսի 14-ին 1860 ամի
(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1360, թ. 2, 5)։

Ի Նախիջևանու հայոց մաղաքային գլխոյ նոր ընտրեալ ստառստայ ի վրա տեղույս տսակել անձանց Պետրոս Պողոսովիդ

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ձեր տսակել անձինքն թուով քառասուն ի 14 են յունիսի սոյն ամի մատուցեալ խնդրովն յուրեանց յայտնեն թե որպես սովորություն է հին ժամանակաց հետե ի մեջ ամենայն արհեստավորաց, խանութպաններից նոյնպես և ձեր մեջն եղել է այդ սովորությունը, ունենալ ի վրա տսակել էսնաֆի ստառստայ այժմ համաձայն այնպիսվոյ հին սովորութեան ընտրել են նոքա իրենց արտելչիքներուն մեջեն համայոժարութեամբ իւրեանց ղբեզ և քեղի օգնական և խորհրդակից Գրիգոր Գասպարովն, Յարություն Մինասովն, Լուսպարոն Սուքիասովն և Սարգիս Օգանովն, որոնց պարտավորում են իրենց միջև պատահելիք վեճերն և անկարգությունք համաձայն կանոնաց և սովորութեանց յուրեանց վերջացնել սիրով և խաղաղությամբ, այդպիսի կանոնք և սովորությունք արհեստին են հետագայքս։

1. Ձեր արտելչիքներն ամենևին չունենան իրավունք մեկզմեկու քետերություն տալու, այսինքն մեկ արտելչիքի զեկուցած բանին մեջ գաղտնաբար մտնելով մեկալ առաջվան զրուցողին ոտք զարնելու։

2. Օտարաքաղաքացիք կամ այլ ազգիք մեր քաղաքի մեջ չունենան ամենևին իրաւունք իրենց գլուխն բան զրուցեր և վրաններն բան առնելու բանելու։

3. Ձեր արտելչիքներն նույնպես այլ ազգիք և օտար քաղաքացիք ձեր արտելներուն մեջն չառնին չի բանեցնուն։ Այլ եթե կուզեն նրանց բանեցնելուն կարող են օրով բռնել բանեցնել, իսկ ով որ օրով կբանեցնում ասելով մեր հայերուն հեսապով արտելի մեջ ծածկաբար բանեցնում է հախ տանե, այնպիսի արտելչիքեն առաջին անգամին թեպետ կներվի այլ երկրորդում անգամի շտրաֆն պիտի առնվի, իսկ երրորդում անգամին պետք է մնայ վասն ընդդիմութեան յուրոյ իներքոյ ատենաց դատաստանի առանց ներելը։

Որով խնդրեն հաստատել զքեզ ի պարտավորություն ստառստայի և որովհետև յետ վերահասութեուն գործելոց եմ կանոնադրությունից վերոհիշեալ խորադիրն տսակել անձանց, երևի դի պայմանադրությունն նոցա ոչ պարունակե յինքեան հակառակ ինչ հայոց օրինաց և սովորութեանց։ Եվ ճանաչելով զայդպիսի ընտրութիւն նոցա համաձայն քաղաքային բարեկարգութեան, վասն այն հաստատելով զքեզ ստառստայ տեղոյս հայ և ռուս տսակել անձանց հրամանագրեմ քեզ այսու դի դու ի ստանալ նորին այսու հետո ունեցիս իշխողութիւն ի վերա նոցա կառավարելով զնոցա սիրով և խաղաղութեամբ։ Ունել անդուլ հայեցողություն ի վերա անկարգութեանց նոցա և ի մեծամեծ

ժանր դիպուածս դառնալ ի ի մագիստրաթն պատուիրելով քեզ սաստկապես դի դու ի վերա քո եղեալ պարտավորությունս ըստ քում մասին կատարեսցես ճշմարտությամբ, առանց թողութեան և ի հակառակ պատահմանն անկցիս ընդ ժանր պատասխանատվություն։

Ի 15 յունիսի 1860 ամի
(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1360, թ. 3—4)։

11.

Նորին գերապատվութեան Նախիջևանայ քաղաքական գլուխ Աղայ Հայրապետյանի

Ի ներքոյ ստորագրող սախաճություն[15] անող անձանց

ԽՆԴԻՐ

Ըստ հին սովորության մեր Նախիջևան քաղաքի ամենայն խանութպանք և արհեստավորք ունեին ստառստայ որպես և մեր սախաճիներն ունեցեալ էին յառաջին ժամանակս, որոց պարտավորությունն է մեր մեջ եղեալ վեճերն ու անկարգութիւններն վերահասու եղեալ համաձայն կանոնաց և սովորութեանց մերոց վերջացուցանել սիրով և խաղաղությամբ, այդպիսի կանոնք և սովորությունք մեր սախաճիներուն են յետագայնս։

1. Կը պարտավորվենք մեք մեր մեջեն ամենայն գիշեր երկու սախաճի մեր սախարապայան լիքցուցած ջուրով և ձիովն մագիստրաթի ազպարն[16] պառկել, այնու զի կրակ պատահած ժամանակին իսկոյն հասնել կրակի տեղն, նույնպես տունը պառկող սախաճիներս ալ զանկին ձայնը լսածներովս իսկոյն պարտեմք հասնել կրակին տեղն, մեր սախաներն լեքցուցած ջուրով։

2. Աստված մի արասցե եթե քաղաքի մեջն ցերեկվայ մեջ որ ժամանակ և իցե կրակ պատահինե, նույնպես մենք իսկոյն պարտեմք ամենքսալ երթալ յիշեալ կրակի տեղն մեր սախու արապաներն լեքցուցած ջուրով և մինչև կրակը անցներոյն անդադար ջուր հասցունել։ Բայց եթե կրակը բոլորովին չառնելով մխանե, յայնժամ ևս պարտիմք երկու սախաճի իլինք սախա արապայ ջուրով պառկել յիշեալ կրակի տեղն, որ ուրիշի ալ անբախտություն չիպատահի և կրակն առանց պահպանելոյ թե կրակի զորությունը չառնե, ըստ որում միշտ ամենիս սախաններն գիշերվայ ժամանակ պետք է իլինք լինին ջուրով։

3. Մեկը մեզանից չունենայ իրավունք ուրիշի մուշտերիի ձեռք գարնելով ինքն ջուր տալու։ Այլ որ ժամանակ սախաճեն իրեն մյուշտերին հետ փողը առնե կտրվինե, այն ժամանակ կարող է ջուր տալու, ընդդեմ պատահմանս այն սախաճենեն շտրաֆ կառնվի յոգուտ մեր քանձանակին առաջին անգամի երկու մանեթ, երկուում անգամի երեք մանեթ, իսկ երեքում անդամին կմնայ այն սախաճին դատաստանի տակ առանց ներելոյ։

4. Յորիս մյուշտերին ջուր չունենալով մեկ սախաճիէ մը ջուր ուզենանե այն սախաճին պարտ է մինչև 10 չելեք ջուր տալու փողով և ոչ ավելի։ Եվ ով

15 *Սախաճի—հրդեհ մարող, սախա—ջայլի վրա ամրացրած մեծ ջրաման, տակառ։*
16 *Ազպար—բակ։*

որ իր սախաճիին պարտք ունենալով՝ պարտքը չիտուած չի կտրված, ուրիշ սախաճիե շատ պահանջե այն սախաճին իրավունք չունի տալու այնպիսվույն ջուր, ընդդեմ պատահմանն նույնպես շտրաֆն կառնվի ջուր տուող սախաճիէն։

և 5. Ամ ժամանակ մեր սախաճիներու մեջ ընդդեմ այս մեր իրավունքներուն տարաձայնություն պատահի այն պարտ է մեր սախաճիպաշին վերահասու լինել իրեն նշանակելով օգնական մարդոցմով՝ վերջացունել սիրով և խաղաղությամբ։

Ուստի մենք համաձայն մեր հին սովորության ընտրեցինք այժմ մեր մեջեն սախաճինապաշի զԳևորգ Զախարովն և նրա օգնական Յարութիւն Ծերունովն, Պապուկ Խարայովն, Պապուկ Թորոսովն և Համբարձում Առաքելովն, գանձապետ Նիքեթ Խապախպաշովն և զչավուշ Օգսենտ Պարոնովն։

Վասն այն յայտնելով զայսմանէ գերապատվության ձերում խնդրեմք խոնարհաբար զվերոյիշեալ Գևորգ Զախարովն հաստատել ի պարտավորության սախաճի պաշիի և տալ նմա առ այն զհրամանագիր։

(Ստորագրություններ)

Ի 19 յուլիսի 1860 ամի
(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1360, թ. 7, 10)։

12.

Ի Նախիջևանու քաղաքային գլխոյ Նոր ընտրեալ սախաճիպաշի Գևորգ Զախարովիդ

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքիս սախաճություն անող անձինքն թուով քսանհինգ ի յուլիսի 1860 ամի մատուցելու խնդրովն յուրեանց յայտնեն թե ըստ հին սովորության մեր Նախիջևան քաղաքի ամենայն խանութպանք և արհեստավորք ունեցել են ստառստայ որպես և ձեր սախաճիներն ունեցել են յառաջին ժամանակս, որոց պարտավորություն է ձեր մեջ եղեալ վեճերն և անկարգությունքն վերահասու եղեալ համաձայն կանոնաց և սովորության ձերոց վերջացուցանել սիրով և խաղաղությամբ, այդպիսի կանոնք և սովորություն ձեր սախաճիներուն են յետագայքս։

1. Կրպարտավորիք Դուք ձեր մեջեն ամեն գիշեր երկու սախաճի ձեր սախաարաբան լեքցուցած ջուրով և ձիովն մագիստրատի աղպարն պառկել. այնու զի կրակ պատահած ժամանակին իսկոյն հասնել կրակի տեղն, նույնպես տունը պառկող սախաճիներտալ զանդին ձայնը լսածներովն իսկոյն պարտին հասնել կրակին տեղն իրենց սախաններն լեքցուցած ջուրով։

2. Աստված մի արասցե եթե քաղաքի մեջ ցերեկվա մեջ որ ժամանակ և իցե կրակ պատահինե, նոյնպես նոքա իսկոյն պարտին ամենքնալ երթալ, յիշեալ կրակի տեղն իրենց սախաարասպաններն լեքցուցած ջուրով և մինչև կրակն անցնելոյն անդադար ջուր հասցունել։ Բայց եթե կրակը բոլորովին չառնել մխանն յայնժամ ևս պարտիք երկու սախաճի իլինք սախարասպայ

ջուրով պառկել յիշնալ կրակի տեղն, որ ուրիշեալ անբախտություն չիպատահի և կրակն առանց պահապանելոյ թե քրակի պորությունը չառնե, ըստ որում միշտ ամենիդ սախաներն գիշերվայ ժամանակի պետք է ի լիք լիննն ջուրով։

3. Մեկ մը ձեպանից չունենայ իրավունք ուրիշի մյուշտերիի ձեռք զարնելու ինքն ջուր տալու, այլ որ ժամանակ սախաճին իրեն մյուշտերին հետ փող առնե կտրվինե այն ժամանակ կարող է ջուր տալու, ընդդեմ պատահմանն այն սախաճիեն շտրաֆ կառնվի յոդուտ ձեր գանձանակին առաջին անգամի 2 մանեթ, 2-րդ անդամի 3 մանեթ, իսկ 3-ում անգամին կմնայ այն սախաճին դատաստանի տակ առանց ներելոյ։

4. Որիտ մյուշտերին ջուր չունենալով մեկ սախաճիեն ջուր ուզենանե այն սախաճին պարտ է մինչև 10 չելեք ջուր տալու փողով և ոչ ավելի։ Եվ ով որ իր սախաճիին պարտք ունենալով պարտքը չի տուած չիկտրված, ուրիշ սախաճիէ ջուր պահանջ՝ այն սախաճին իրավունք չունի տալու այնպիսվոյն ջուր, ընդդեմ պատահմանն նույնպես շտրաֆն կառնվի ջուր տվող սախաճիեն։

5. Որ ժամանակ ձեր սախաճիներու մեջ ընդդեմ այս մեր իրավունքներուն տարաձայնություն պատահինե այն պարտ է ձեր սախաճինապաշին վերահասու լինել իրեն նշանակեալ օգնական մարդուցմով և վերջացունել սիրով և խաղաղությամբ։ Ուստի նրանք համաձայն իւրեանց սովորութեան ընտրել են այժմ իրենց մեջեն սախաճինապաշի զքեզ և քեզի օգնական Յարութիւն Ծերունովն, Պապուկ Խարայովն, Պապուկ Թորոսովն և Համբարձում Առաքելովն, գանձապետ Նիքիտ Խապախպաշովն և զչավուշ Օգսենտ Պարոնովն վասն այն յայտնելով զայնմանե ինձ խնդրեն խոնարհաբար, հաստատել զքեզ ի պատվավորություն սախաճի պաշիի։ Եվ որով յետև ետ վերահասություն գործելոյ իմ խնդրոյ ձեր սախաճություն անող անձանց երևի զի յոժարակամությամբ արարել նոցա պայմանագրություն ոչ պարունակե յինքեան հակառակ, ինչ հայոց օրինաց և ճանաչելու զայդպիսի ընտրողություն նոցա համաձայն քաղաքային բարեկարգության վասն այն ևս հաստատելով զքեզ սախաճիպաշի ի վերա քաղաքից սախաճություն անող անձանց հրամանագրեմ քեզ այսու։ Զի դու ի ստանալ նորին այսուհետև ունեցիս իշխողություն ի վերա տեղվոյս սախաճիներուն կառավարելով զնոսա սիրով և խաղաղությամբ, ունել անդուլ հայեցողություն ի վերա անարգութեանց նոցա և ի մեծամեծ ծանր դիպուածս դառնալ ի սոյն մագիստրատն պատվիրելով քեզ սաստկապես զի դու ի վերա քոյ եղեալ պարտավորությունս քում կատարեսցես առանց թողութեան և ի հակառակ պատահմանն անկցիս ընդ ծանր պատասխանատվություն։

Ի յուլիս 1860 ամի

(ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1360, թ. 8—9)։

13.

Նորին Յարգութեան Նախիջևանի բաղաքային գլուխ Աղայ Կարապետ Հայրապետյանի

Քաղաքիս Նախիջևանի ղեկիեի էսնաֆի

ԱՄԵՆԱԽՈՆԱՐ ԽՆԴԻՐ

Ի գաղթելն աղգիս Հայոց ի Ղրիմու և ի կառուցանելն նոցա քաղաքս Նախիջևան մեր տիքիճի էսնաֆն ուներ բերևալ անտի ընտյուր և յետոյ ևս գնեալ զչորս մեծ պղնձեայ սանս (խալկին) յորոց մեծագոյնն քան զամենեսին էր երեսուն վեստանոց՝ նաև զմի շերեփ մի քեվկիր և մին սյուզկիչ պղնձի, որք ի գործ եդեալ լինեին առ մեզ ի ժամանակի մետաղագործութեան ի պետս հացկերոյթի ըստ հին նախնական սովորութեան մերում և յայլ դեպս։ Եվ բաց յայդմանե յետ անցանելոյ ժամանակաց ինչ զկնի շինութեան քաղաքիս մեր էսնաֆին ի գանձանակն յուրմն գոյացեալ դրամոք ուներ, ի գնեալ ի քաղաքիս զմի խանու զոր տալով ի վարձու ստացեալ անտի զարդյուս մեր էսնաֆն ստանայր ամիամի մինչև ցավուրս վարպետ գլխույն մերոյ Խարաօղլան Պապիին և ի գործ եդեալ լիներ այն ի պետս աղքատաց և հիվանդաց մերոյս հասարակութեան։ Եվ այդ ժամանակներն մեր քաղաքի խաֆաֆներն գտանելով ընդ մեզ ի նեղ կապակցության մեր վարպետ գլխովն կկառավարվեին, չունելով վասն ինքեանց զառանձին վարպետ գլուխ։

Եվ երբ խաֆաֆներուն տուր և առուին օր ըստ օրէ բարգավաճեալ ընդարձակելով ստացավ զկերպ Եվրոպեական տուր և առումի յայնժամ նոքա սակավ առ սակավ հեռանալով ի մենջ վերջապես բոլորովին բաժանեցան ի մենջ և գոլով նոցա քան զմեզ զորեղ և ձայնավոր ի ձեռն նոցա անձին այսուհետև վերոյիշյալ սանքն (խալկիններն) և այլ պղնձեայ անոթքն, նաև վերոյիշեալ խանութ զոր նոքա յետոյ ի նորոյ շինելով և ունելով զայն մինչև ցարդ յուրեանց տիրապետութեան, ունին ստացեալ անտի զբաղմագումար դրամս արդեանց յընթացս բավական ամաց ժամանակի և այժմ ևս ստանան։ Այդ խանութն այժմ գտանի ի վարձու առ պերպեր Միքայելն, որ գտանի բախալներուն դիմացի սրան։

Եվ որովհետև վկայութեամբ հին ավուրց ծերունեաց քաղաքիս բավականապես կարե հաստատել, զի վերոյիշեալ խալկիններն, նաև մի խանութն են իսկական սեպհականություն մերոյս էսնաֆի։ Եվ որովհետև ի քաղաքիս այժմ ոչ գոյ խաֆաֆ էսնաֆ, ըստ որում զի նոքա ամենեքեան համարեայ թե գրելով ի վաճառական, առնեն զտուր և առումի յուրեանց նոյն կերպով և նոյն կարգով որպես այլ վաճառականք քաղաքիս ուստի և կարելի է համարձակապես անվանել զնոսա վաճառականս և ոչ էսնաֆ կամ ցեխ և ընդ նմին գոլով նրանց կարողության տեր մարդիկ չուններ ևս կարոտություն ոչ այդպիսի անոթոց և ոչ խանութի յորոց վերջինդ կարե համարել օժանդակիչ հնարք վասն աղքատաց, իսկ մեր էսնաֆի մարդիկն գոլով ըստ մեծի մասին աղքատք միշտ կարոտեն օգնականության գանձանակի, և գանձանակն մեր ի ներկայ ժամանակիս չունի ուստեքե արդյունս ինչ գոլով զրկեալ ի սեպհականությունն յուրմն։

Որով յայտնելով պայդմանն հարգության Ձերում, խոնարհաբար խնդրեմք վերահասութեն դործեալ հանդամանաց խնդրոյս ի ձեռն հարցման ի ծերունի անձանց ի միջի խաֆաֆներուն և մեր էսնաֆի, նաև պահանջել, ի խաֆաֆներեն դհյուճեթն խանութին, որում տիրեն նոքա, թե յումմե արդյոք դնել իցեն նրանք զսյն բարեհաճել տալ մեզ բավականություն։

Ի 30 յուլիսի 1860 թվոյ ի Նախիջևան։

(Ստորագրություններ)

(ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 139. գ. 1360, թ. 12, 14)։

14.

1865-ին ամի հունիսի 1-ին եղև գիրս այս ի Նոր Նախիջևան յաղագս կապակցությամբ միոյ պեսպես օրինակավ

Մեք ի ներքո ստորագրեալքս Նախիջևանցի կոշկակար արհեստավորքս, հաճելով ըստ հրամանի ուստապաշիյին, յաղագս նրա պեսպես օրինադրությամբ պարտեմք առանց պատճառաբերութեան մի ըստ միոջն ընդունել, զոր ինչ որ ի ներքո ուրույն ուրույն բացահայտի։

Նախ.— Եթե ի մեջ մեր արհեստավորացն կամիցի հայ և կամ ռուս, խալֆայ պոնել, պարտ է նորա պոնողը հայտնվել այն վարպետին, որում մոտը կրնակեր այն խալֆա, այնու համար որ, եթե խալֆան պարտք ունեցած ըլայ պարտավոր է պարտքն տալ հետո պոնել, և կամ իրենց մեջն հոժար կամոք կտրուել։ Թե չէ կարող չէ ուրիշն նրան պոնել, եթե պոնե, պարտ է հայտնել վարպետ գլուխին, և նա պարտ է դատել առանց այլև այլի։ Եվ կամ կարողությամբ կերե շտռաֆ առնել։

Երկրորդ— Ով ոք համարձակի ինքնագլուխ վարպետություն անելու, չունենա համարձակություն առանց հայտնվելու վարպետ գլուխին, մինչև երեք և կամ չորս վարպետով մինասիպ չի տեսնուն, նա կարող չէ վարպետություն անելու կամ տարիքով լինի 24 և կամ 25 տարեկան։

Երրորդ—Եթե վարպետաց միջին ով որ կեղծավորությամբ վարվի և եթե նրա կեղծավորությունը վերջապես հայտնվի, նա ևս կմնա օրինավոր շտռաֆի տակ։

Չորրորդ— Մեր վարպետաց մեջին եթե զաքաղնի պան պանող լինի և նրա պանն ֆալշ լինի և գան եավիթսայ ըլլայ տերն, կամ կարն գակուի կամ երեք օրեն էքճեն ծուվի և կամ դանակ բաղուցունու, այն վարպետեն պանած պանին կիօրեխա պահակի տակ կիյնի կամ շտռաֆ կառնվի։

Հինգերորդ— Եթե մեկ վարպետի չավուշ խրկիմ վասն գործի, եթե ընդդիմանա, կամ փակ կեղծավորություն անե չիքայ, այն ժամանակն շառաֆն կառնվի կամ անպատիվ և կամ յօլսրս կլայ առանց ներելու։

Վեցերորդ—Եթե մեր մեջէն առանց քաշքուկի խաղաղ խալֆա կրոնե, այնժամ ևս պարտեմ առանց մնալոյ մագիստրաթ հայտնելու։

Յոթերորդ— Եթե որ մեկը կոշկակար արհեստավորներեն առանց այս ուսլովիային տակը ձեռք չի քաշած լինի, եթե պաղարն հանե կոշիկ ծախելու իրավունք չունենա։ Եթե մեկն այս ձեռք դնողներեն տեսնի այդպիսի պատահմունք կարող է առանց այլ և այլի առնել նրա ձեռքեն ծախու կոշիկը և պոիստավիթ անե վարպետ գլուխին։ Եվ նա էլ ինչպես որ ուզե կարող է ա-

ռանց այլև այլի դատել։ Եվ այն կոշիկն ծախվի պոլզու օսլշչի իրենց քասին։ Եվ եթե Ռաստովևս բերին ծախելու, նմանապես այս վերոհիշյալ օրինակով կարող է դատել վարպետ գլուխն։

Եվ ի ներքո ստորագրենք հոժարությամբ։

Ուրեորդ— Եթե մեկ կոշկակար մեկ աղա մը պոնե և այն ժամանակին պետք է վարպետ գլուխին տանե տա այն պահած մարդուն բաշբուռթ, որ վարպետ գլուխնայ տանե մեր մադիստրատ եավիտ անե։

Ինեերորդ— Եթե այն կոշկակար վարպետը պահած տղին բաշբուռթը չի տանե չիտա վարպետ գլուխին, թե այն ժամանակը իմանա վարպետ գլուխը, որ առանց գլխաքերէ այն պոնած աղան այն ժամանակին պետք է առանց պատճառի դատե իր պոնողին։

(ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 139. գ. 1911, թ. 44 և 47)։

УСТАВЫ НОВОНАХИЧЕВАНСКИХ АМКАРСТВ

Доктор историч. наук В. Б. БАРХУДАРЯН

(Резюме)

В первой половине XIX столетия в Новонахичеванской армянской колонии быстро развивалась экономическая и культурная жизнь. Одной из важных отраслей экономики здесь было ремесленное производство, развитие и специализация которого вызвали необходимость объединения ремесленников в отдельные цеховые организации — амкарства.

В архивах сохранились относящиеся к 1830—1860 гг. уставы новонахичеванских амкарств (сапожных, золотых дел, пожарных, портных, скорняков и т. д.). Подвергаясь некоторому влиянию местных русских цеховых организаций, они, тем не менее, по своим общим принципам и структуре были похожи на армянские амкарские организации, существовавшие в городах Закавказья.